

# ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԴԻՍ ԱԲԵԲԱՅՈՒՄ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ սույն թվականի սեպտեմբերի 2-ին Ադիս Աբեբա մեկնեց գերաշնորհ Տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյանը (Ֆրանսիա)՝ մասնակցելու Եթովպական Ուղղափառ Եկեղեցու նոր Պատրիարքի գահակալության հանդիսություններին:

Նախապես որոշվել էր, որ գահակալության հանդիսություններին մասնակցի Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանը, սակայն իր առողջական վիճակի պատճառով սրբազան հայրը չկարողացավ մասնակցել:

Սեպտեմբերի 4-ին, կիրակի օրը, Ադիս Աբեբայի Ս. Երրորդություն Մայր տաճարը և շրջափակը առավոտից լեփ-լեցուն էր հավատացյալների բազմությամբ:

Կատարվեց առավոտյան ժամերգություն: Այնուհետև ս. պատարագ մատուցեց Եթովպական Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալը՝ Նորին Սրբություն Մերկորեվոս Պատրիարքը:

Ս. պատարագից անմիջապես հետո տեղի ունեցավ գահակալության արարողությունը, որին ներկա էին Հռոմեական Կաթոլիկ, Ալեքսանդրիայի Հույն Ուղղափառ, Ռուս Պրավոսլավ, Հնդիկ Մալաբար, Անգլիկան, Լատինական և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների, ինչպես նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչներ: Գահակալության հանդիսություններին հրավիրվել էին նաև պետական ներկայացուցիչներ և դեսպաններ:

Հայ և Հնդիկ Մալաբար Եկեղեցիների ներկայացուցիչները, Եթովպական Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոսների հետ, գործնականորեն մասնակցեցին Եթովպիայի նորընտիր Պատրիարքին գավազանի և խաչի հանձնման հանդիսավոր արարողությանը: Տ. Դավիթ սրբազանը հայերեն լեզվով արտասանեց «Որ օրհնես զայնոսիկ» մաղթերգը:

Այնուհետև Հայ Եկեղեցու ներկայացուցիչ սրբազանը ֆրանսերեն լեզվով շնորհավորանքի և բարեմաղթությունների խոսք ասաց՝ ուղղված Եթովպական Ուղղափառ Եկեղեցուն և անձամբ Նորին Սրբություն Մերկորեվոս Պատրիարքին: Սրբազան հայրը իր խոսքում հատկապես շեշտեց.

«Հանուն Հայաստանյայց Եկեղեցվո ընդհանրական պետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոսին Ամենայն Հայոց, կներկայացնեմ ջերմ շնորհավորություններ Ձերոս Սրբության, մաղթելով Ձեզի երջանկություն, բարօրություն և առողջություն՝

աղոթելով Զերդ Սրբության աստվածահաճո գործոց հաջողության, Տիրոջ փառքի ծառայության, ձեր հայրենիքի ծաղկման և ժողովուրդի հառաջդիմության համար»:

Հավարտ գահակալության հանդիսությունների տեղի ունեցավ սիրո ճաշկերույթ, որտեղ նույնպես հնչեցին անկեղծ շնորհավորանքի և բարեմաղթությունների խոսքեր:

Հաջորդ օրերին գերաշնորհ Տ. Դավիթ եպս. Սահակյանը հանդիպումներ ունեցավ եթովպահայ գաղութի անդամների հետ: Տարբեր օրերին նա սուրբ պատարագներ մատուցեց և ժամերգություններ կատարեց տեղի հայոց Ս. Գևորգ եկեղեցում՝ ամեն անգամ նշելով Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդյան 80 և գահակալության 33-ամյակները՝ անկեղծ և որդիական բարեմաղթություններ ուղղելով Նորին Սրբության հասցեին:

Տ. Դավիթ սրբազանը Ադիս Աբեբայում կմնա մինչև սեպտեմբերի 18-ը, որից հետո կմեկնի Կահիրե՝ հրավերով Եգիպտոսի հայոց թեմի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն եպս. Չինչինյանի և կարգադրությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

ԹՂԹԱԿԻՑ